

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՒ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /ՀՀ ԿԱ ՊԵԿ ՄԱՍՈՎ/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ 2009Թ. ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

I. Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք, ժամանակին հարկման ապահովում

1. Պեդական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների կենտրոնացում մեկ վարչարարական վայրում

- 01.01.09թ-ից ուժի մեջ է մտել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի նոր կառուցվածքը (ՀՀ կառավարության 04.12.08թ. N 1425-Ն որոշում), համաձայն որի.

- հարկային տեսչությունները կրճատվել են 14-ով,
- խոշոր հարկ վճարողների, ակցիզային հարկ վճարողների, բանկերի և վարկային կազմակերպությունների և հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության:

- Հաստատվել են խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշները և դրանց կիրառման կանոնակարգը: Սահմանվել են հետևյալ չափանիշները և շեմերը.

1. Իրացումից հասույթը - տարեկան կտրվածքով սկսած 500 մլն. դրամից,
2. Հաշվեգրված հարկերը - տարեկան կտրվածքով սկսած 37.5 մլն. դրամից,
3. Ակտիվների հաշվեկշռային արժեքը - տարեկան կտրվածքով սկսած 300 մլն. դրամից,
4. Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը - տարեկան սկսած 50 աշխատողից:

- Հրապարակվել է 325 խոշոր հարկ վճարող կազմակերպությունների ամսական ամփոփ ցուցանիշների մոնիտորինգային աղյուսակը:

2.Նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով

Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ակտերը, դրանց վերաբերյալ վարչական կարգով գանգատարկումները, և հարկային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժեր նշանակելու մասին որոշումները պարբերաբար հրապարակվել են ինտերնետային կայքում:

3.Խոշոր հարկ վճարողների կողմից փաստաթղթաշրջանառության հարցերի կանոնակարգման շնորհիվ հարկային եկամուտների ապահովում, առաքումների, հասույթի գրանցման գրքերի վարման կանոնների հստակեցում

- Մշակվել և ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների՝ հարկային ներկայացուցիչներին վերաբերող դրույթները: Միաժամանակ, մշակվել է ներկայացուցիչների նշանակման, աշխատանքների կազմակերպման կարգը,

- նախաձեռնված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի դրույթների փոփոխությունները, մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման կարգի սահմանումը:

II. Հարկ վճարողների շահերի պաշտպանություն և նրանց սպասարկման որակի բարձրացում, հարկման ինքնագնահատման սկզբունքների կիրառման ընդլայնում՝ զուգահեռաբար ներդնելով ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ

1. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում

- 2009թ. հոկտեմբերին գործարկվել է էլեկտրոնային հաշվետվությունների սպասարկման կենտրոնը, և ևս մեկ սպասարկման կենտրոն՝ Արաբկիրի հարկային տեսչությունում: Ֆինանսական ռեսուրսների առկայության պայմաններում մյուս 3-ը կգործարկվեն 2010թ.-ին:

2. Հաշվետվությունները էլեկտրոնային տարբերակով հարկային մարմիններ ներկայացնելու համակարգի մշակում, փորձնական կիրառում և ներդրում

- Ապահովված է հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու օրենսդրական հիմքը: Սահմանվել է 01.01.10թ-ից հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու պարտադիր պահանջ մի շարք կազմակերպությունների համար: Ստեղծվել է էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխման խորհուրդ, ինչպես նաև մասնագիտացված աշխատանքային խմբեր (18 խումբ),
- Հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգը սկսել է գործել 01.09.09թ-ից: Այժմ էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ պայմանագրեր են կնքել 145 հարկ վճարողներ: Ներկայումս ընդունվում են 11 հաշվետվական ձևեր, 2010թ. հունվարից դրանց կավելանան ևս 16 ձևեր:

3. Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում, ներառյալ նաև հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացումը

- Հաշվետվությունների մշակման ավտոմատացված, հիշեցում-ծանուցագրերի ավտոմատ կազմման և տպագրման համակարգերը գործում են 01.04.09թ-ից: Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների մասով դրա իրականացումը նախատեսվում է 2010թ. օգոստոսից:

4. Հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմի էական բարելավում

- Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել հարկային և մաքսային օրենքների կիրառման մասին մեկնաբանությունների տրամադրման հայեցակարգը: Միաժամանակ, մշակվել և ՀՀ ԱԺ կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել են հայեցակարգից բխող «Հարկերի մասին», «Հարկային ծառայության մասին» օրենքներում լրացումները:

5. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում

- Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների

ընտրության համակարգի (ՌՉՍՀ) հայեցակարգը: Միաժամանակ, մշակվել և հաստատվել է ՌՉՍՀ-ի կիրառման կարգը:

III. Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության (ներառյալ հետբացթողումային հսկողության) համակարգերի զարգացում և կատարելագործում

- Հաստատվել է մաքսային հսկողության ռիսկերի պրոֆիլների մշակման, դրանց կիրառման, ակտիվացման և դադարեցման հրահանգը, իրականացվում են միջոցառումներ հրահանգի գործանական ներդնումն ապահովելու ուղղությամբ,
- ԵՄ «Թվինինգե և «Թայեքս» ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են հետբացթողումային հսկողության դասընթացներ՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ: 2009թ. սկսվել է դասընթացների 1-ին փուլը: Միաժամանակ, հրապարակվել է «Ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության իրականացումը ՀՀ-ում» ձեռնարկը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ 2009Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Մշակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի փոփոխությունների նախագիծ, որի կատարման ընթացքի ապահովումը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության վրա: Մշակվել է երկիմաստությունների և տարընթերցությունների ցանկ՝ հարկային օրենսգրքի «Հատուկ մասի» մշակման ժամանակ հաշվի առնելու նպատակով: Որոշ տարընթերցումների վերացման նպատակով մշակվել են մի շարք օրենսդրական նախագծեր,
- Մաքսային ստուգումների շրջանակների տարանջատման և հստակեցման նպատակով մշակվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի լրացումների նախագիծը, ինչպես նաև «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի, մաքսային օրենսգրքի փոփոխությունների օրենսդրական նախագծերը:
- Մաքսային ընթացակարգերի պարզեցման, հստակեցման նպատակով մշակվել են ՀՀ կառավարության N 1930-Ն, N 236 որոշումների փոփոխությունների նախագծեր: